ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ <<ՄՇԱԿՈՒՅԹ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ)

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան.
Կ.Դեմիրճյանի անվան հրապարակ.
Համայնքապետարանի վարչական շենք

ԵԼԻՑ N 10
17 փետրվարի 2025թ.

«ԱՐՇԱԿ ՄԱՆԱՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿԻ» ԱՁ-ԻՆ

Հարգելի պարոն Մանասյան.

Համաձայն 2025 թվականի հունվարի 15-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «ԱՐՇԱԿ ՄԱՆԱՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված մեքենայի վարձակալության ծառայությունների մատուցման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԾՁԲ-2025/3» պայմանագրի՝ «ԱՐՇԱԿ ՄԱՆԱՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿԻ» անհատ ձեռնարկատերը պարտավորվել է պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացնելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կնքել համաձայնագիր՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Համապատասխան ֆինանսական միջոցները հաստատվելուց և գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 2025 թվականի հունվարի 22-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում համաձայնագիր կնքելու մասին: 2025 թվականի փետրվարի 10-ին սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում այն մասին, որ համաձայնագրի կնքման վերջնաժամկետը սահմանված է սույն թվականի փետրվարի 13-ը ներառյալ: «ԱՐՇԱԿ ՄԱՆԱՍՅԱՆ ԱՐԵՍՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետում չի ստորագրվել համաձայնագիրը:

Հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 15-ին կնքված մեքենայի վարձակալության ծառայությունների մատուցման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԾՁԲ-2025/3» պայմանագրի 7՝13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միակողմանի լուծում է 15.01.2025թ. կնքված թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԾՁԲ-2025/3» պայմանագիրը:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ **Ա. ԱԲԳԱՐՅԱՆ**